ՊՈՂՈՍ ԷՄՄԱՆՈՒԵԼՅԱՆԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Է. Գ. ՌՇՏՈՒՆԻ

Նախորդ հարյուրամյակի հայ տրամաբանական միտքը մեզանում ըստ էության մասնագիտական ուսումնասիրության չէր ենթարկվել։ Մինչդեռ վերջին տասնամյակում սովետահայ փիլիսոփայական պատմագրության այդ ուղղությամբ ծավալած աշխատանքները ցույց տվեցին, որ հիշյալ ժամանակաշրջանի մտավոր մշակույթի մեջ հասած ժառանգության մեջ զգալի տեղ է հատկացված տրամաբանական պրոբլեմների ուսումնասիրությանը։ Նրանում հստակորեն արտացոլվել են այդ դարաշրջանի գրեթե բոլոր տրամաբանական ուսմունքներն ու նրանց միջև ծավալված պայքարի գլխավոր խնդիրները։

Այդ տեսակետից ուշադրության արժանի է նաև Պողոս Էմմանուելյանը (1829—1904), որին, սակայն, մեզ հայտնի փիլիսոփայական գրականությունը որևէ կերպ չի անդրադարձել։

Աշխարհայացքով Էմմանուելյանը օբյեկտիվ իդեալիստ է, բայց զգացել է ժամանակի գիտական ու հասարակական կյանքի ոգին և աշխատել է կրոնավորի իր աշխարհայացքը հարմարեցնել զարգացող հայ բուրժուազիայի շահերից բխող լուսավորության ու գիտական առաջադիմության պահանջներին։ Նրա սիստեմը, որ շարադրված է «Տարերք բանական փիլիսոփայութեան» ստվարածավալ աշխատությունում[1], նկատելիորեն ներթափանցված է Եվրոպական բուրժուազիայի շրջաններում լայն տարածում ստացած պոզիտիվիստական փիլիսոփայության հիմնական սկզբունքներով։ Բնական է, ուրեմն, որ Էմմանուելյանի աշխարհայացքին հատկանշական են ներքին խոր հակասություններ, որոնք դրսևորվել են մի կողմից լուսավորչական միտումների ի հայտ բերման, իսկ մյուս նրանց արդյունքները հավատի ու եկեղեցու նեղ շրջանակներին համապատասխանեցնելու ձգտման մեջ։ Սրբ ցերեկով լույսը չտեսնելը տկար աչքին է միայն հատուկ,— գրում է նա։— Ուզել լուսավոր դարում և անտարբեր գտնվել գիտության լույսի առջև, ուսման ու բարեկրթության առջև, սեփական անձի արհամարհում է նշանակում։ Բայց և միաժամանակ պնդում է, թե մարդու մտավոր ու բարոյական կատարելագործումը վերջին հաշվով հիմնված է հավատի վրա։

Ամեն մի գիտության, այդ թվում բուն փիլիսոփայության համար Էմմանուելյանը անհրաժեշտ է համարում նախ հետազոտության «միջոց և գործիք պատրաստել»։ Նախքան Հռոմ գնալը, գրում է նա, պետք է գիտենալ Հռոմի ճամփան, «վասն որոյ ասեմք զոլ տրամաբանութեանն տիրապէս գիտութիւն, որոյ սկզբունք ի բազում մասունս գիտական ցուցման դաստիարակ եղեն»[2]։

Տրամաբանության դեռևս Արիստոտելից եկող այս տրադիցիոն ըմբռնման մեջ, որը հետագայում ցայտուն կերպով արտահայտվել է նաև Կանտի մոտ, Էմմանուելյանն աշխատում է նշմարել մի կարևոր հանգամանք. նա փորձում է տրամաբանության շրջանակներում որակական տարբերություն մտցնել ճշմարտության կամ օբյեկտիվ իրականության հետազոտման մեթոդի և ձևականորեն շիտակ մտակառուցումների, այսինքն՝ բուն ուղղախոհության կանոնարկումների միջև, առաջնությունը տալով մեթոդական կողմին։ Հետագայում իմացաբանության և ձևական տրամաբանության՝ որպես համեմատաբար ինքնուրույն գիտական բնագավառների, ձևավորման հնարավորությունն էլ հիմնվել է այդ բնույթի տարբերակման վրա։

Տրամաբանելը, այսինքն ճշմարտության հասնելու ուղիներից օգտվելը, մարդուն հատուկ է բնությունից, որի պատճառով էլ այն համարվում է բնական տրամաբանություն։ Փիլիսոփաները մարդու տրամաբանելու այդ հատկությունը ենթարկել են կանոնների և այսպիսով կարծես թե ստեղծել են մի երկրորդ տրամաբանություն, «որ սահմանի գիտութիւն ուսուցանելոյ զկանոնս մաչ ձեւնարկութեան և ծանուցանելոյ զաղբիւրս նշմարտութեան (ընդգծումները մերն են— Է. Ռ.)»[3]։ Ահա այս երկրորդն է իսկական իմաստով գիտական տրամաբանությունը, որի մեջ

---

1 Պ. Էմմանուելյան, Տարերք բանական փիլիսոփայութեան, Կ. Պոլիս, 1872։

2 Տե՛ս նույն տեղում, հատ. 1, էջ 5։

3 Տե՛ս նույն տեղում։

նա անց է կացնում վերը նշված տարբերակումը։ Զևական տրամաբանությունը, որը հեղինակի մոտ նույնացվում է մտահանգմանը («ձեռնարկութիւն»), սահմանում է միայն այն կանոնները, որոնց համաձայն տվյալ դրույթը պետք է անխուսափելիորեն հանդիսանա նախորդ դրույթների տրամաբանական հետևանքը։ Թեև նախորդ դրույթների ստուգության պահանջը ստույգ տրամաբանելու նախապայմանն է, սակայն տրամաբանելու ստուգությունը ամենևին էլ այդ բանով չի պայմանավորված, այլապես ամեն մի սխալ անհրաժեշտաբար կհանգեր տրամաբանական սխալի։ Զևական տրամաբանության այս վերջին պահանջը նրա իսկ սեփական ռեսուրսներով իրագործվել անկասկած չի կարող։ Բուն տրամաբանության շրջանակներում չկան այսպիսի կանոններ, որոնցով հնարավոր լինի ցույց տալ այս կամ այն դրույթի (նախադրյալի) ճշմարիտ կամ կեղծ լինելը։ Իր այս պնդմամբ Էմմանուելյանը, այսպիսով, հանգում է այն տեսակետին, որ ձևական տրամաբանությունը գործ ունի նշանակության և ոչ թե ճշմարտության հետ։

Բայց քանի որ տրամաբանությունը ավանդաբար հռչակված է եղել որպես ճշմարտության հասնելու միջոց, ուրեմն և հեղինակը չէր կարող իր տրամաբանական ուսմունքի մեջ իմացաբանական տարր չմուծել։ Ահա սա է պատճառը, որ Էմմանուելյանի մոտ ֆորմալ-տրամաբանական և իմացաբանական պրոբլեմները հանդես են գալիս կողք-կողքի, բայց ոչ որպես միևնույն բան։ Տվյալ հոդվածի սահմանները թույլ չեն տալիս թեկուզ համառոտակի քննության ենթարկելու իմացաբանական գլխավոր պրոբլեմների ըմբռնումը Էմմանուելյանի կողմից, մի բան, որը կարևոր նշանակություն ունի նրա տրամաբանական ուսմունքի էությունը լիովին բացահայտելու գործում։ Սակայն Էմմանուելյանի արծարծած իմացաբանական պրոբլեմներից այստեղ մենք ընդհանուր գծերով կանդրադառնանք միայն ճշմարտության հարցին։ Ճշմարտության հասնելու հարցը Էմմանուելյանը քննել է սկսում հենց նրա ակունքներից։ Նա մանրամասնորեն վերլուծում է փիլիսոփայության պատմության ընթացքում ճշմարտության ձեռքբերման մասին եղած բոլոր ուսմունքները։ Ըստ հեղինակի, այդ ուսմունքներից յուրաքանչյուրի մեջ կա որոշ ռացիոնալ իմաստ. այդ ուսմունքներից յուրաքանչյուրն իր տեղում և իր չափով ճշմարտության հասնելու պրոցեսի մի կողմն է արտացոլում, միայն թե առանձին ուսմունքներում այն բացարձակացվել է։

Էմմանուելյանը ճշմարիտ է համարում այն ամենը, ինչ գոյություն ունի և ինչպես որ գոյություն ունի և այդ առումով խիստ քննադատում է թե՛ սկեպտիցիզմը, թե՛ ագնոստիցիզմը։ Այդ քննադատությունից անմասն չի մնում անգամ երկրորդական հատկանիշների մասին ուսմունքը, որը սուբյեկտիվիզմի զարգացման համար հող է հանդիսանում։ Ջերմությունը, գույները, համը և նման այլ հատկանիշները նույնպես գալիս են առարկաներից, որպես նրանց որակական տարբերություններ, և մեր հոգում զգայություններ են առաջացնում առարկաների որպիսության մասին։ Եթե դա այդպես չլիներ, իմացաբանությունը հարկադրված կամ պետք է ժխտեր արտաքին աշխարհի ճանաչման հնարավորությունը, կամ էլ պետք է սահմանափակվեր միօրինակ ու ամուլ մի աշխարհի տխուր պատկերների շրջանակներում։ «Ե՞րբ նետս Քանթ զկարմրուքևանն ենթակայ լինել իւրոյ հոգւոյն, և՞րբ նետս Ֆիքթէ զկանաչ գոյն հոգւոյ իւրոյ. ապաքեն սոքա են և խեղկատակութիւն թշնամացն ճշմարտութեանն»[4]։ Եթե ամեն բան իր հավիտենական ու անհրաժեշտ ձևը, իր գոյության օրինաչափությունները ընդուներ մարդու հոգում, ինչպես կարծում է Կանտը, ապա հարկ չէր լինի որևէ քայլ կատարել արտաքին առարկաների իմացության ուղղությամբ, նշում է Էմմանուելյանը։

Այստեղ անհրաժեշտաբար առաջ է գալիս ճշմարտության չափանիշի հարցը։ Տալով փիլիսոփայության պատմության մեջ այդ հարցի վերլուծական պատմությունը, հեղինակը կանգ է առնում գիտելիքների բացահայտ ճշմարտության, ակնհայտության ռացիոնալիստական ուսմունքի վրա. այն է՝ «յայտնի պայծառութիւն իրին, որում հակառակ կալ չկարեմք, այլ ընդունեմք զնա, և միտք մեր խայտայ ի պայծառութիւն նորա»։

Տրամաբանությունը, ըստ Էմմանուելյանի սահմանման, գիտություն է ճշմարտություններ հայտնաբերելու մասին։ Այսպիսի սահմանման մեջ դրսևորվել է Էմմանուելյանի աշխարհայացքի հակասականությունը։ Նա, որպես օբյեկտիվ իդեալիզմի ջատագով, կանգնած է փիլիսոփայությունը աստվածաբանության սպասավորը համարելու սխոլաստիկական տեսակետին։ Տրամաբանությունը ևս, լինելով փիլիսոփայության մի մասը, պետք է այդպիսին համարվեր։ Այդ դեպքում նրա նշանակությունը ըստ էության կսահմանափակվեր ճշմարտության հայտնաբերման և հիմնավորման հարցերին ոչնչով չառնչվող մի ձևական ուսմունք լինելու մեջ և հանդես կգար

4 Տե՛ս նույն տեղում, էջ 373։
5 Տե՛ս նույն տեղում, էջ 84։

սոսկ իբրև աստվածաբանության շուրջը վեճեր մղելու հմտություն ուսուցանող արվեստ։ Հիրավի, «խոլաստիկայի կողմից արիստոտելյան տրամաբանական ուսմունքի անվերջ մեկնաբանությունները աղավաղել էին այն, նրանում սպանել այն ամենը, ինչը կենդանի էր, և հավերժացրել մեռածը (Լենին)։ Տրամաբանական մտքի ետարիստոտելյան պատմության մեջ Բեկոնը և Դեկարտը առաջինը հանգես եկան մտածողության եղանակի կամ մեթոդի վերանայման պահանջով։ Դեկարտը, ինչպես և Բեկոնը, արտադրաեղանակի և բնության նկատմամբ մարդու գործնական իշխանության փոփոխության մեջ տեսնում էր մտածողության մեթոդի փոփոխության արդյունքը, գրում է Կ. Մարքսը «Կապիտալ»-ի առաջին հատորի ծանոթագրության մեջ[6]։

Որոշակի իմաստով կարելի է պնդել, որ Էմմանուելյանի համար նույնպես հատկանշական է տրամաբանության բնույթի վերոհիշյալ ըմբռնումը։ Նրա կարծիքով տրամաբանությունը միակ գիտությունն է, որով մարդկային միտքը ղեկավարվում է ամեն մի միջնորդված իմացության ու նրա ակունքների հայտնաբերման պրոցեսում, թեև տրամաբանության այս բովանդակության բացահայտման գործում Բեկոնի և Դեկարտի պատմական ծառայությունները նրա մոտ մնում են աննկատ։

Տրամաբանության՝ որպես նոր գիտելիքների ձեռքբերման միջոցի ըմբռնումը Էմմանուելյանին հարկադրել է այն հանգեցնել մտահանգման տեսությանը, մի բան, որը հատկանշական է եղել ժամանակի գրեթե բոլոր տրամաբանների համար։ Մտքի մյուս ձևերը՝ հասկացությունը և դատողությունը, նրա կողմից նկատվում են իբրև մտահանգման տարրեր կամ բաղկացուցիչ մասեր և քննվում են սոսկ այնքանով, որքանով գա անհրաժեշտ է մտահանգման էության մեկնաբանման համար[7]։

Ինչ է հասկացությունը ըստ Էմմանուելյանի պատկերացման։

Հասկացությունը, կամ ինչպես ինքն է ասում, գաղափարը, առարկայի պարզ ըմբռնումն է, առանց նրա մասին որևէ բան հաստատելու կամ ժխտելու։ Առարկան ինքը հատկանիշների ամբողջություն է։ Միտքը այդ հատկանիշների միջոցով թափանցում է առարկայի ներքին բովանդակության մեջ և մտովի տեսնում ու ճանաչում է այն։

Առարկան, որի հետ կատարվում է մտավոր գործողությունը, գոյություն ունի ճանաչող սուբյեկտից անկախ և գտնվում է նրա առջև որպես իմացության օբյեկտ։ Բայց մարդը կարող է քննել առարկայի հատկանիշները մտովի՝ դրանք առարկայից անջատելով և մտքում առարկայի սուբյեկտիվ պատկերը ստեղծելով։ Եվ որովհետև այդ պատկերը մտքում գոյություն կունենա որպես հատկանիշների հարաբերություն, ուրեմն այն, ի տարբերություն օբյեկտի, պետք է գիտվի իբրև մտքի սուբյեկտ[8]։ Օրինակ, հոգու հասկացությունը մտքում գոյություն ունի որպես խորհրդածության հատկանիշի կրողը, կամ վերջինիս սուբյեկտը։ Ի տարբերություն օբյեկտի, սուբյեկտը մշտապես որևէ գործողություն կատարելու կամ որևէ հատկանիշ կրելու հետ է կապված մարդու մտքում, որը և դատողություն կազմելու պոտենցիալ հիմքն է հանդիսանում։ Սա, անկասկած, արդյունավետ միտք է հասկացության և դատողության միջև դիալեկտիկական կապի ըմբռնման իմաստով, որը, սակայն, ժամանակի տրամաբաններին անհայտ չի եղել։ Եթե նկատի ունենանք դեպի սենսուալիզմը հեղինակի ունեցած հակումները, ապա հասկացության բնույթի նման մեկնաբանությունը միանգամայն հասկանալի է։ Էմմանուելյանը այն դրույթն է պաշտպանում, որի համաձայն հասկացությունը, առարկաների էական ու ընդհանուր հատկանիշների ամբողջությունը լինելով, մարդու մտքում առաջ է գալիս որպես նրա իմացական գործունեության ուղղակի արդյունք։

Հասկացության առաջացման հարցի կապակցությամբ հեղինակը քննադատաբար անդրադառնում է դրա կոնցեպտուալիստական, ռեալիստական և նոմինալիստական տեսություններին։ Մերժելով այս տեսակետներից յուրաքանչյուրը, նա գտնում է, որ հարցի ճշմարիտ լուծումն ընկած է հենց դրանց միջև։ Մարդը առարկաները ճանաչելով մեկ առ մեկ, նրանց նման հատկանիշների հիման վրա ստեղծում է տեսակային կամ սեռային հասկացություններ, որոնք հետո կիրառում է իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների նկատմամբ։ «Արդ ըմբռնելն մերում զրաղում ծանոթութիւնս՝ նախ զգայարանք պարտին ներկայացնել մտաց զառարկայս, և միտք պարտին ըմբռնել զներկայացեալ զառարկայս և հակառակ իմն ընթացիւք զառարկա-

6 Տե՛ս Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հատ. 1, Հայպետհրատ, 1954, էջ 409։

7 Տե՛ս նույնը Ա. Գարագաշյանի մոտ։

8 Նկատենք, որ այդ թեզը պաշտպանում են հատկապես մախիստները։

յաց. քանզի սոքա զանհատն յառաջ բերեն մեզ և միտք յընդհանուր ծանոթութեանց սկսանի զծանոթութիւն իւրՍ։

Էմմանուելյանը փորձում է կապ տեսնել հասկացության վերը նշված երեք տեսակների միջև։ Ընդհանուրը և առանձնահատուկը (մասնավորը), ըստ հեղինակի, գոյություն չունեն առանց եզակիի, այլ պայմանավորված են այն հատկանիշներով, որոնք հատուկ են առարկաների խմբին կամ բոլոր առարկաներին։ Որ հերթին եզակին անհասկանալի, անըմբռնելի կլիներ առանց առանձնահատուկի կամ ընդհանուրի, որոնց միջոցով այն սահմանվում է։ Գաղափարական սահմանափակվածությունը, սակայն, հեղինակին թույլ չի տալիս զարգացնելու այդ արդյունավետ միտքը և բարձրանալու եզակիի, առանձնահատուկի և ընդհանուրի դիալեկտիկայի ըմբռնման մակարդակին։

Հասկացության դասակարգման հարցերում հեղինակը հիմնականում հետևել է տրադիցիոն տրամաբանության սկզբունքներին։

Հասկացությունն արտահայտվում է բառի միջոցով, գրում է Պ. Էմմանուելյանը, սակայն ի՞նչ փոխհարաբերության մեջ են դրանք գտնվում, այդ հարցին նա չի անդրադառնում։ Մեկնելով հասարակական կյանքի բացատրության հարցերում իդեալիստական այն սխալ տեսանկյունից, թե հասարակության գոյության համար պարտական ենք սիրույն («Ոնման զնմանս սիրէ»), նա գտնում է, որ այդ սերը կարող էր արտահայտվել միայն հաղորդակցվելու միջոցով, մի բան, որն առանց լեզվի հնարավոր չէր լինի։ Ակներևաբար Էմմանուելյանին լեզվի աստվածային ծագման տեսությունը չի բավարարում, այդ պատճառով էլ լեզվի աստվածային թե բնական ծագման հարցը նա թողնում է չլուծված, ավելի հիշտ՝ թողնում է իմաստասերների լուծմանը, և՛ մեկի, և՛ մյուսի մեջ գտնելով արդարացուցիչ հիմքեր։

Էմմանուելյանի կողմից հետաքրքրական լուծում են ստացել դատողության տեսությանը վերաբերող որոշ հարցեր։ Հենց սկզբից նրա մոտ ցայտուն կերպով դրսևորվում է դատողության և հասկացության միջև գոյություն ունեցող կապի ըմբռնումը։ «Օբյեկտի» և «սուբյեկտի» յուրօրինակ տարբերակմամբ հեղինակը կամուրջ է գցում մտքի այդ երկու ձևերի միջև, հասկացությունը օժտելով դատողության վերածվելու պոտենցիալ կարողությամբ։ Սա հիշեցնում է դատողության առաջացման հեգելյան դրույթը, ըստ որի դատողությունը հասկացության էության բացահայտումն է։ Առանձին գաղափարների իմացությունը անխուսափելիորեն հանգեցնում է դրանց բաղդատության, գրում է Էմմանուելյանը։ Ստացվում է, որ դատողությունը ամենևին էլ հասկացությունների մեխանիկական միացությունը չէ, այլ իմացության արդյունք է։ Հենց այդպես էլ նա գրում է։ Միայն բաղդատությունը բավական չէ դատողություն կազմելու համար, այլ անհրաժեշտ է, որ միտքը «հավանություն» տա այդ բաղդատությանը, կամ այն մերժի, որպես համապատասխան կամ ոչ համապատասխան։ Իսկ այդ համապատասխանությունը բացահայտվում է շնորհիվ առողջ մտքի և պարզ իրականության։

Սխալ են այն փիլիսոփաները, գրում է Էմմանուելյանը, որոնք պնդում են, թե իբր դատողությունը պետք է նախորդի բաղդատվող հասկացությունների համապատասխանությանը, այսինքն դատողությունը պետք է անկախ լինի հասկացությամբ արտահայտված առարկաների իրական հարաբերություններից և այդ հարաբերությունները ենթարկի իրեն։ Վերջին հաշվով նրանց համար այլ բան է դատողությունը և այլ բան՝ գաղափարների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը, իսկ դա անհեթեթություն է, գրում է հեղինակը։ Ոչ մի դեպքում միտքն ինքը չի ստեղծում իրերի համապատասխանությունը, այլ արտացոլում է նրանց միջև իրական հարաբերությունները։

Այստեղից հետևում է, որ դատողություն կազմելու համար անհրաժեշտ է. 1. հասկացությունների հստակություն, 2. նրանց բաղդատություն, 3. իրականության հետ այդ բաղդատության համապատասխանություն։

Իսկ դատողության մեջ հաստատման կամ ժխտման մասին խոսք լինել չի կարող,— գրում է այնուհետև Էմմանուելյանը։ Հաստատումը կամ ժխտումը վերաբերում է արդեն երկու գաղափարների միջև հարաբերության բառային արտահայտությանը։ Այդ առթիվ նա նշում է, որ մարդու մտավոր գործողության արդյունքը բառերով արտահայտելիս գործ ենք ունենում նախադասության հետ, որտեղ հաստատվում կամ ժխտվում է մի բան մեկ այլ բանի նկատմամբ։

Դատողության Էմմանուելյանի տված սահմանման մեջ որոշակիորեն կարելի է նկատել օբյեկտիվության արիստոտելյան սկզբունքը, որը մթագնվել կամ մոռացության էր տրվել սխո-

9 Տե՛ս Պ. Էմմանուելյան, նշվ. աշխ., էջ 307։

լաստիկայի կողմից և որին հաճախակի սկսեցին դիմել նոր ժամանակների տրամաբաններից ոմանք։

Այն միտքը, թե դատողության մեջ հասկացությունների միմյանց նկատմամբ համապատասխան կամ անհամապատասխան լինելը նախադասության մեջ երևան է գալիս հաստատման կամ ժխտման ձևով, վկայում է, որ հեղինակը տարբերակում է դատողությունը և նախադասությունը։ Դատողությունը և նախադասությունը նույնը չեն, որովհետև ամեն նախադասություն չէ, որ կարող է հաստատել կամ ժխտել հասկացությունների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը, այլ միայն պատմողական նախադասությունը։ Իմացական առումով ավելի կարևոր է հաստատական նախադասությունը, քան ժխտականը, որովհետև նրա միջոցով է, որ բացահայտվում է հասկացության բովանդակությունը։ Ժխտական նախադասության գոյությունը հեղինակը բացատրում է սոսկ հաստատական հանգամանքների բացակայությամբ և անտեսում է առանձին դեպքերում նրա ունեցած պոզիտիվ նշանակությունը։ Իմացական առումով ժխտական դատողությունը նույնպիսի արժանիքներով է օժտված, ինչպիսին հաստատականն է։

Այսքանից հետո Էմմանուելյանը հնարավոր է համարում անցնել «բուն տրամաբանության», այսինքն մտահանդման քննությանը։

«Տարերք բանական փիլիսոփայութեան» գրքի առաջին մասում հեղինակը «մտքի առաջին գործողությունները»՝ հասկացությունը և դատողությունը, ինչպես ասացինք, սոսկ օժանդակ միջոց է համարում մտահանգման էության բացահայտման համար։ Կարելի էր ենթադրել, որ նա կտա վերջինիս խոր և ծավալուն վերլուծությունը։ Իրականում, սակայն, այդ «բուն տրամաբանությունը» Էմմանուելյանի ամբողջական տրամաբանական ուսմունքի առավել աղքատ ու սխեմատիկ մասն է։

Էմմանուելյանի կարծիքով տրամաբանության գլխավոր ֆունկցիան՝ ճշմարտությունների բացահայտումը, իրագործվում է որևէ անհայտ միտք հայտնի ճշմարտությանը համադրելու ճանապարհով։ Ձեռք բերված նոր ճշմարտության միջնորդավորված լինելու հանգամանքը չի նսեմացնում նրա հավաստիությունը, որովհետև դեդուկտիվ մտահանգման բուն պրոցեսը միևնույն ժամանակ տրամաբանական լիարժեք ապացուցման պրոցես է, եթե այն մեկնում է ճշմարիտ և ապացուցված նախադրյալից։ Այլ կերպ ասած՝ Էմմանուելյանի մոտ նոր ճշմարտության բացահայտման և նրա ապացուցման պրոցեսները միահյուսվում են տրամաբանական միևնույն գործողության՝ սիլլոգիստական մտահանգման մեջ։ Ահա թե ինչու, բացատրելով մտահանգման էությունը, հեղինակը ընդգծում է, որ նրա համար անհրաժեշտ նախադրյալներից մեծը, որի հետ համեմատվում է նվազ ընդհանուր նախադրյալը, անպայմանորեն պետք է ճշմարիտ լինի, իսկ վերջինս՝ «մթին», «անծանոթ»։ Եվ եթե դրանց համեմատության հետևանքով պարզվի, որ վերջինը համապատասխանում է ելակետային ճշմարիտ նախադրյալին, ապա «անծանոթը ծանոթ կդառնա»։ Չհամապատասխանելու դեպքում այն կեղծ գուրս կգա, քանի որ ճշմարտությունը չի կարող մեկ այլ ճշմարտության հակասել։

Իսկ ի՞նչ պետք է հասկանալ նախադրյալների համապատասխանություն ասելով։ Այդ հարցը Էմմանուելյանը պարզաբանում է հետևյալ կերպ։ Սեռային ու տեսակային հասկացությունները իրենց բովանդակային առումով պարունակվում են եզակի հասկացության մեջ, հետևաբար մտահանգման համեմատվող նախադրյալների կազմում նվազ ընդհանուր և անծանոթ գաղափարը իր բովանդակության մեջ պետք է անպայմանորեն պարունակի ելակետային նախադրյալի հայտնած ընդհանուր ճշմարտությունը։

Ի տարբերություն այն տրամաբանների, որոնք դատողության տերմինների հարաբերության հարցը գիտում են սոսկ ծավալային առումով, սիլլոգիստական մտահանգման հավաստիությունը եզակիի, մասնավորի և ընդհանուրի միասնությունից բխեցնելը Էմմանուելյանի մոտ անկասկած գնահատելի է։ Նա Արսեն Բագրատունու նման այդ սկզբունքը օգտագործում է նաև ինդուկտիվ տրամաբանության գոյությունը հիմնավորելու համար, թեև վերջինս այդ սկզբունքը դեդուկցիայի համար բացառել է։ Ինդուկտիվ մտահանգումը, գրում է Էմմանուելյանը, թվում է թե հակասում է սիլլոգիզմին, քանի որ կատարյալ մտահանգման իմաստը ընդհանուր ճշմարտությունից մասնավորը բխեցնելն է։ Բայց էականը, որ համապատասխանում է ընդհանուրին, չի կարող չհամապատասխանել նաև մասնավորին, որի մեջ նա դրսևորվում է։ Նմանապես մասնավորը իր էական հատկանիշներով գտնվում է ընդհանուրի մեջ։ Ուստի մասնավորից ընդհանուրին գնալը նույնպես օրինաչափ է, եթե այն կատարվում է էական, այլ ոչ թե պատահական հատկանիշների հիման վրա։ Դա նաև գործնական անհրաժեշտություն է, որովհետև մարդու մոտ ընդհանուր գիտելիքները ձեռք են բերվում միայն առանձին առարկաների իմացությամբ, նրանց

ընդհանուր ու էական հատկանիշների վերացարկմամբ։ Դրանք էլ հենց դեդուկցիայի ելակետային դրույթներն են կազմում։

Այնուամենայնիվ մտահանգման կատարյալ ձևը Էմմանուելյանի համար մնում է կատեգորիկ սիլլոգիզմը։ Դեդուկտիվ մտահանգման բոլոր մյուս ձևերը, որոնք նույնպես մանրամասնորեն քննվել են հեղինակի կողմից, վերջին հաշվով հանգում են կատեգորիկ սիլլոգիզմի աքսիոմային։

Ավարտելով իր տրամաբանական ուսմունքը, Էմմանուելյանը հարկ է համարում վերջում մի քանի խոսք ուղղել ընդդեմ «թշնամեացն տրամաբանութեան»։ Տրամաբանության տակ հասկանալով գլխավորապես սիլլոգիստական մտահանգումը, հեղինակն այդ գիտության հակառակորդներ է համարում բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ հակադրվել են դեդուկտիվ սկզբունքին կամ առհասարակ ռացիոնալիզմին, այդ թվում Բեկոնին, Լոկին, Կոնդիլյակին։ Ակներև է, որ նա ձգտում է տրամաբանությունը պաշտպանել ծայրահեղ էմպիրիզմի միակողմանիությունից, սակայն ինքը ևս միակողմանի մոտեցում է հանդես բերում Բեկոնի, Լոկի և մյուսների սենսուալիզմի գնահատման հարցում։

Անցյալի հայ փիլիսոփաների, այդ թվում նաև Պողոս Էմմանուելյանի տրամաբանական ուսմունքի քննական վերլուծությունը, որքան էլ դա ուրվագծորեն արվի, ինչպես տվյալ հոդվածում, հայ տրամաբանական մտքի պատմության ամբողջացման անհրաժեշտ նախապայմաններից մեկն է, ուստի և չի կարող անտեսվել ժամանակակից հայ փիլիսոփայական պատմագրության կողմից։